

**«Գրանցված է»**  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
31 հունվարի 2012 թ.  
Պետական գրանցման թիվ 05012070

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

6 դեկտեմբերի 2011 թ.

թիվ 336-Ն

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

### **«ՀԱՐԿՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/14-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նպատակ ունենալով սահմանելու ներդրումային ֆոնդերի հարկման համար զուտ ակտիվների հաշվարկման միասնական սկզբունքներ և հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հարկվող շահույթի որոշման համար ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/14-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ**

**Ա. Զավադյան**

2011 թ. դեկտեմբերի 8  
Երևան

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի  
2011 թվականի դեկտեմբերի 6-ի  
թիվ 336-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Զավադյան \_\_\_\_\_

2011 թվականի «\_\_\_\_\_» «\_\_\_»

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարարի  
2011 թվականի դեկտեմբերի 30-ի  
թիվ 1126-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարար

Վաչե Գաբրիելյան \_\_\_\_\_

2011 թվականի «\_\_\_\_\_» «\_\_\_»

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/14**

**ՀԱՐԿՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ  
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

**ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ**

1. Սույն կանոնակարգը սահմանում է հարկվող շահույթի որոշման նպատակով ներդրումային ֆոնդերի, այդ թվում՝ ոչ հրապարակային ֆոնդերի (այսուհետ՝ ֆոնդ) զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը:

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

3. Հրապարակային ֆոնդի հարկվող շահույթի որոշման համար ֆոնդի զուտ ակտիվների արժեքը (հարկվող շահույթը) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՋԱԱ} = \text{ՀՋԱԱ}_1 + \text{ՀՋԱԱ}_2 + \dots + \text{ՀՋԱԱ}_n, \text{ որտեղ}$$

ՀՋԱԱ-ը ֆոնդի՝ հարկվող շահույթի որոշման համար հաշվարկված զուտ ակտիվների արժեքն է,

ՀՀԱԱ<sub>i</sub>-ը i-րդ օրվա դրությամբ ֆոնդի՝ հարկվող շահույթի որոշման համար հաշվարկված զուտ ակտիվների արժեքն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀՀԱԱ}_i = (\text{ՀԱԱ}_i + \text{Շ}_i) / \text{Պ}, \text{ որտեղ՝}$$

ՀԱԱ<sub>i</sub>-ը i-րդ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ի 14-րդ գլխի համաձայն հաշվարկվող ֆոնդի զուտ ակտիվների արժեքն է,

Շ<sub>i</sub>-ը տվյալ տարվա սկզբից մինչև i-րդ օրը ներառյալ ֆոնդի ակտիվների հաշվին ֆոնդի փայտերերին (բաժնետերերին) շահաբաժնի կամ նման այլ ձևով կատարված բաշխումների գումարն է,

Պ-ը տարվա ընթացքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականությունն է (տարվա ընթացքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկների քանակը): Ընդ որում, եթե ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է օրական պարբերականությամբ, ապա Պ-ն հավասար է 365-ի, իսկ ոչ աշխատանքային օրերի շահութահարկի հաշվեգրվող գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում նախորդող աշխատանքային օրվա զուտ ակտիվների արժեքը: Ֆոնդի կանոնների (կանոնադրության) համաձայն ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականությունը տարվա ընթացքում փոփոխվելու դեպքում փոփոխված Պ-ն հաշվարկվում է այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

4. Ոչ հրապարակային ֆոնդի հարկվող շահույթի որոշման համար ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է տվյալ ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված կարգով՝ առանց ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքից ֆոնդի մասնակիցներին շահաբաժնի կամ նման այլ ձևով վճարման ենթակա գումարների նվազեցման: